թագավորելուց հետո սելջուկների գահին տիրանում է Խզրը, որ գրավում է Լոռի քաղաքը և Հաղբատն ու Սանահինը այրում[1]։

Այդպիսի մեծ երկրաշարժներից և այրվելուց չէր կարող անվնաս մնալ Սանահնի Ամենափրկիչը և, մեր կարծիքով, 1181 թվականին այդ եկեղեցու նորոգությունը և հին գավթի տեղում նոր գավիթ շինելու պատճառը հին շենքերի վնասված լինելն էր երկրաշարժից և այրվելուց։

Սանահնի 1197 թվականի մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Գրիգոր Տուտեորդին վանքին նվիրել է 8 գիրք, մի ոսկեգիր հարցնատետր և այլ եկեղեցական թանկարժեք իրեր (արձ. 20)։ Թե այդ ձեռագրերը, բացի հարցնատետրից, ինչ բովանդակություն են ունեցել, մեզ հայտնի չի, բայց նրան պատկանող մի ուրիշ ձեռագիր, որ այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, գրված 999 թվականին, բովանդակում է Պողոսի թղթերի Եփրեմի և Ոսկեբերանի մեկնությունները։ Հավանական է, որ մյուս գրքերն էլ մեծ մասամբ մեկնաբանական, փիլիսոփայական և գիտական լինեին։ Հարցնատետրը ցույց է տալիս, որ Գրիգոր Տուտեորդին եղել է դասախոս Սանահնի դպրոցում, որովհետև միջնադարյան դպրոցներում հարցնատետրը աշակերտներին սովորեցնելու համար էր ծառայում։

1183 թվականին, իր կենդանության ժամանակ, Գրիգոր Տուտեորդին շինել է տալիս իր գերեզմանը և վրան կանգնեցնում մի խաչքար, որ ոչ միայն նրա կազմող Մխիթար քանդակագործի անմահության կոթողը, այլև հայոց հազարավոր խաչքարերի լավագույն օրինակներից մեկը կարող է համարվել։

Տուտեորդին իր գերեզմանը շինելուց հետո, դեռևս երկար ժամանակ կենդանի է մնացել, որովհետև, ինչպես քիչ առաջ տեսանք, նա 1197 թվականին վանքին նվերներ է տվել։ Տուտեորդուն հաջորդել է Հովհաննեսը[2], որի արձանագրությունները մեզ հայտնի են՝ Գրիգոր Տուտեորդու կենդանության ժամանակվանից սկսած։ Նշանակում է, Գրիգոր Տուտեորդին իր կենդանության վերջին տարիներին, հավանաբար 1197 թվականին, երբ իր գրքերն ու անձնական մյուս գույքը («Ռ վերացման խաչ մասամբ, Բ վառ ատլաս... և այլ արդիւնք») վանքին էր նվիրում և վանահայրությունն էլ հանձնել էր իր հաջորդ և երբեմն էլ աթոռակից Հովհաննեսին, իսկ ինքը հեռու էր քաշվել հասարակական կյանքից՝ կյանքի վերջին օրերը միայնության մեջ անցկացնելու համար, ինչպես սովորություն էր միջին դարերում՝ վանականների, նույնիսկ իշխանների և երբեմն էլ թագավորների համար։

Գրիգոր Տուտեորդին մեռած պետք է լինի դարագլխի մոտերքը, համենայն դեպս նա 1208 թվականին, ինչպես տեսանք, Լոռիի ժողովը գումարվելու ժամանակ արդեն մեռած էր։

Տուտեորդու հաջորդ՝ Հովհաննեսը նույնպես խաչենցի է եղել, ինչպես այդ մասին տեղեկանում ենք նրա գրած մի արձանագրությունից (№ 175), իսկ Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ այս Հովհաննեսը եղել է Զաքարե և Իվանե եղբայրների «սնուցողը», այսինքն դաստիարակն ու ուսուցիչը։

Գանձակեցին, թվելով Լոռիի ժողովին մասնակցող երևելի անձերը, Հովհաննեսի մասին գրում է հետևյալը՝

> «Յովհաննէս հայր Սանահնին, որ զկնի մահուան Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին, սնուցող նոցուն իշխանացն»[3]։

Եթե Տուտեորդին գրասեր էր և օգնում էր վանքի շինարարական աշխատանքներին, ապա Հովհաննեսը շինարարական մեծ աշխատանքներ է կատարում Սանահնում։ 1205 թվականին պատկանող մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Հովհաննեսը մի հյուրանոց է շինել Զաքարե և Իվանե եղբայրների արևշատության համար։ Այդ հյուրանոցի մնացորդները չեն պահպանվել և նույնիսկ չգիտենք, թե որտեղ է կառուցված եղել նա և ինչ ճարտարապետություն է ունեցել, բայց, քանի որ Սանահին այցելող ճանապարհորդների հանգստյանն էր ծառայե-

[1] Սամուելի Անեցւոյ Հաւաքմունք..., էջ 121, Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860, էջ 61։ Հմմտ. նաև Կիր. Գանձակեցի, էջ 99։

[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 162։

[3] Նույն տեղում, էջ 162։